

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**«Սոցիալական» ֆիզիկական անձանց ժամկետային ավանդ**

**1. Ավանդի տոկոսադրույքներ (պարզ տոկոսադրույք)**

Ավանդի նվազագույն գումար/ արժույթ	Տոկոսների վճարման եղանակ	61-180 օր	181-365 օր
10.000 ՀՀ դրամ	Յուրաքանչյուր ամիս	5.80%	7.50%
	Ժամկետի ավարտին	6.00%	8.00%

**2. Ավանդի նկարագրություն, էական դրույքներ**

- 2.1. Ավանդը ներդրվում է ՀՀ ռեզիդենտ կենսաթոշակառուների կողմից:
- 2.2. Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ արժույթով:
- 2.3. Ավանդի ներդրման նվազագույն գումարը կազմում է 10.000 ՀՀ դրամ:
- 2.4. Ավանդի առավելագույն գումար սահմանված չէ:
- 2.5. Ավանդը լրացուցիչ մուտքագրումներով և ելքագրումներով է: Ավանդին/ից լրացուցիչ վերջին մուտքագրումը/ելքագրումը կարող է կատարվել մինչև Ավանդի մարման ժամկետից 30 օրացուցային օր առաջ: Ընդ որում, մուտքագրումների արդյունքում Ավանդի գումարը չի կարող գերազանցել տվյալ ավանդատեսակի համար սահմանված առավելագույն շեմը՝ համաձայն 2.4. կետի: Ավանդից ելքագրումները կարող են կատարվել մինչև Ավանդի նվազագույն գումարը:
- 2.6. Ավանդի ժամկետը սահմանվում է 61 օրից մինչև 365 օր: Այն դեպքում, եթե Ավանդի վերջնաժամկետը ոչ աշխատանքային օր է, ապա Ավանդի գումարը վերադարձվում է հաջորդ աշխատանքային օրը, իսկ Ավանդի դիմաց տոկոսագումարները հաշվարկվում են Ավանդի՝ պայմանագրով սահմանված ժամկետի համար՝ ավելացված նաև ոչ աշխատանքային օրերի համար հաշվարկված տոկոսագումարները:
- 2.7. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են Ավանդի ժամկետի ավարտին կամ ամսական: Ավանդատուի ընտրությամբ, տոկոսագումարները կարող են կապիտալացվել Ավանդի գումարին և ավտոմատ երկարաձգվել:
- 2.8. Ավանդի դիմաց տոկոսագումարները հաշվեգրվում են՝ սկսած Ավանդի գումարը հաշվին մուտքագրելու հաջորդ օրվանից մինչև Ավանդը վերադարձնելու օրվան նախորդող օրը Ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ:
- 2.9. «Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք»-ի հաշվարկման ժամանակ հիմք է ընդունվում տարվա փաստացի օրերի քանակը:
- 2.10. Ավանդի համար սահմանված տոկոսային եկամուտը փոխանցվում է Բանկում Ավանդատուի բանկային կամ քարտային հաշվին (եթե առկա չէ Ավանդատուի այլ հանձնարարականը):
- 2.11. Ավանդի համար պայմանագրով սահմանված տոկոսադրույքը պայմանագրային ժամկետում փոփոխման ենթակա չէ:
- 2.12. «**Եկամտային հարկի մասին**» ՀՀ օրենքի համաձայն՝ Ավանդատուին Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես Ավանդատուի հարկային գործակալ, զանձում է եկամտային հարկ՝ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:

**3. Ավանդի ձևակերպման և դադարեցման դրույքներ**

- 3.1. Ավանդի ձևակերպումն իրականացվում է Ավանդատուի՝ իր անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:
- 3.2. Ավանդը կարող է ներդրվել նաև Ավանդատուի լիազոր ներկայացուցչի կողմից, Բանկի հետ Ավանդի պայմանագիր կնքելու և Ավանդի գումարը մուծելու մասին նուտարի կողմից վավերացված լիազորագրի և լիազոր ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի ներկայացմամբ:
- 3.3. Ավանդը Բանկային ավանդի Պայմանագրով պայմանադրված ժամկետում չպահանջվելու դեպքում Ավանդային պայմանագիրը երկարաձգվում է նույն ժամկետով և արժույթով, երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար գործող պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույքը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար Բանկում գործող տոկոսադրույքը: Համապատասխան ավանդատեսակի պայմաններով այլ բան նախատեսված լինելու դեպքում հիմք են ընդունվում այդ պայմանները: Ընդ որում, տվյալ ժամկետային Ավանդի ներդրվումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, ավանդի Պայմանագիրը վերածնակվում է նույն արժույթով՝ բանկային (ցպահանջ) հաշվի համար տվյալ պահին Բանկում սահմանված պայմաններով: Այս դեպքում Բանկը պարտավոր է տեղեկատվական ամփոփագիրն ավանդատուին տրամադրել ավանդային պայմանագրով նախընտրած ժամկետում եղանակով՝ ավանդային պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից տասնհինգ օրացուցային օր առաջ:
- 3.4. Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել պայմանագրում նախատեսված ավտոմատ երկարաձգման պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգման ենթակա ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ տեղյակ պահելով Ավանդատուին:
- 3.5. Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդի պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կատարվում է տոկոսների վերահաշվարկ՝ տարեկան 0.01% տոկոսադրույքով:

**4. Տեղեկատվություն սակագների և տուժանքների մասին**

- 4.1. Ավանդային հաշվի բացման, վարման և փակման ընթացքում տուժանքներ չեն կիրառվում:
- 4.2. Ավանդային հաշվի նվազագույն մնացորդ չպահպանելու դեպքում տուժանքներ չեն գանձվում:
- 4.3. Հաշվի քաղվածք՝

<b>Բանկային հաշվով քաղվածքի տրամադրում <sup>1</sup></b>		
ընթացիկ կամ նախորդ ամսվա համար		Անվճար
2-ից 12 ամիս վաղեմության		1900
1 տարուց ավել վաղեմության		3900
<b>Վճարային փաստաթղթերի պատճենների տրամադրում <sup>1</sup></b>		
<b>Թղթային տարբերակով պահվող փաստաթղթերի դեպքում <sup>2</sup></b>		
մինչև 1 տարի վաղեմության		2900
1 տարուց ավել վաղեմության		4900
<b>Էլեկտրոնային տարբերակով պահվող փաստաթղթերի դեպքում <sup>2</sup></b>		1900
<b>Տեղեկանքների տրամադրում Բանկի ստանդարտ տիպային ձևով <sup>1</sup></b>		
հայերեն լեզվով		2900
ռուսերեն լեզվով		3900
<b>Տեղեկանքների տրամադրում ոչ ստանդարտ ձևով <sup>1</sup></b>		5900

<sup>1</sup> Ներառյալ ԱԱՀ  
<sup>2</sup> Յուրաքանչյուր ձևի համար

**5. Այլ լրացուցիչ պայմաններ`**

- 5.1. Ավանդին մուտքագրումներ կարող են կատարվել հետևյալ եղանակներով`
- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ ցանկացած մասնաճյուղում,
  - «Հեռախոսային բանկ» ծառայության միջոցով,
  - «Ինտերնետ Բանկինգ» ծառայության միջոցով,
  - «Սոբայլ Բանկինգ» ծառայության միջոցով,
  - Tell-Cell/ Easy Pay վճարային տերմինալների միջոցով,
- 5.2. Ավանդի գործողության ընթացքում Բանկն Ավանդատուին տրամադրում է VISA Int./ MasterCard վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագներով`
- Բանկում ներդրված ավանդի/ներքի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (ներառյալ նաև` ավանդի/ներքի երկարաձգումը) կիրառվում է`
    - o քարտի սպասարկման ամսական վճար` 0 ՀՀ դրամ
    - o «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ բանկումատներում քարտից կանխիկացման վճար` 0 ՀՀ դրամ
  - Բանկում Ավանդատուի գործող ավանդի/ներքի ժամկետը լրանալու և չերկարաձգվելու դեպքում, ինչպես նաև Ավանդատուի կողմից ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցնելու ամսաթվին հաջորդող ամսից սկսած քարտի համար կիրառվում է`
    - o ամսական սպասարկման վճար`
      - Visa Classic/ Mastercard Standard – 590 ՀՀ դրամ
      - Visa Gold/ Mastercard Gold – 2.500 ՀՀ դրամ
    - o «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ բանկումատներից կանխիկացման վճար`
      - Visa Classic/ Mastercard Standard/ Visa Gold/ Mastercard Gold – 0.15%
  - քարտի թողարկման և սպասարկման մնացած բոլոր սակագները սահմանվում են համաձայն Բանկում գործող ստանդարտ սակագների:
- 5.3. Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված`
- Visa Classic/ MasterCard Standard – մինչև 7.000.000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի ավանդ ներդնելու/ունենալու դեպքում,
  - Visa Gold/ MasterCard Gold - 7.000.001 ՀՀ դրամ և ավել ընդհանուր գումարի ավանդ/ներք ներդնելու/ունենալու դեպքում:
- 5.4. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 1 և ավել քանակով ավանդ ձևակերպող/ած Ավանդատուն ժամանակի կոնկրետ պահին կարող է ունենալ 5.3. կետի պայմաններին բավարարող 1 պլաստիկ քարտից ոչ ավել:
- 5.5. Պլաստիկ քարտը կարող է տրամադրվել Ավանդատուին ինչպես ավանդի/ներքի ձևակերպման պահին, այնպես էլ ավանդի/ներքի` Բանկում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:
- 5.6. Ավանդատուի կողմից 2-րդ և յուրաքանչյուր հաջորդ ավանդի ձևակերպման արդյունքում Ավանդատուի` «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում գործող ավանդների ընդհանուր գումարի` 5.3. կետի պայմաններին բավարարման դեպքում` Ավանդատուին կարող է տրամադրվել ավելի բարձր դասի պլաստիկ քարտ` պարտադիր փակելով նախկին` ցածր դասի պլաստիկ քարտը:

**6. «Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք»-ի հաշվարկման օրինակ`**

Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ`  
 (100 000 ՀՀ դրամ) \* 8.00% = 8 000 ՀՀ դրամ` 365 օրվա համար:

**7. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)`**

**«APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ` APY)»` տվյալ ավանդատեսակի համար հաշվարկված ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:**

**7.1. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) կազմում է`**

Ավանդի նվազագույն գումար/արժույթ	Տոկոսների վճարման եղանակ	61-180 օր	181-365 օր
10.000 ՀՀ դրամ	Յուրաքանչյուր ամիս	5.86%	7.72%
	Ժամկետի ավարտին	6.05%	8.12%

**7.2. APY – տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ`**

(100 000 ՀՀ դրամ) \* 8.12% = 8 120 ՀՀ դրամ` 365 օրվա համար:

**8. Վեճերի լուծման կարգը`**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

**Տեղեկացնում ենք**, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

**Հայտարարություն:** Հաշիվը և դրամում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

**Հայտարարություն:** Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով` իր կողմից նախապես ընտրված` հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում` փոստով` բնակության կամ հաշվառման հասցեով):

**9. Ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից` համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:**

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են`

		Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ
--	--	---



Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն ՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն ՀՀ դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 5 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

**Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ [www.vtb.am](http://www.vtb.am) կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:**

Հաստատվել է 08.02.2018թ. Թիվ 22 Հրամանով